ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորական ուղերձը Կանանց տոնի առթիվ

07.03.2020

Սիրելի կանայք,

Ի սրտե և լավագույն ցանկություններով շնորհավորում եմ ձեզ գարնանային այս գեղեցիկ օրվա՝ մարտի 8-ի առթիվ:

Պատահական չէ, որ Կանանց տոնը համընկնում է գարնան գալուստի և բնության զարթոնքի հետ: Քանզի կինն է կյանքի սկիզբը, բնության այն քնքուշ էակը, ով ստեղծված է սեր, հոգատարություն ու ջերմություն տարածելու համար:

Սիրելի կանայք, մեր պետությունը, ընտանիքը և ազգային արժեքները կայուն ու հարատև են հենց ձեր շնորհիվ: Եվ այսօր պատեհ առիթ է կրկին շնորհակալություն հայտնելու ձեզ մեր իրականությունն առավել ներդաշնակ, կյանքը՝ գեղեցիկ, իսկ ապագան լուսավոր դարձնելու համար:

Կրկին շնորհավորելով ձեզ գարնանային այս ոգեշնչող տոնի առթիվ՝ ցանկանում եմ, որ միշտ փոխադարձվի այն բարին ու դրականը, որով գունավորում եք մեր կյանքը: Եղեք առողջ, երջանիկ և միշտ շրջապատված սիրով ու ջերմությամբ: Տոնական բարձր տրամադրություն և ամենայն բարիք բոլորիդ: